ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N3-Ա

«22»հունվարի 2020 թվական գյուղ Լուսակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 08-048--0111 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.13149 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՍԿՈՎ ՄԿՐՏԻՉԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2019 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը (Քաղաքացիական գործ թիվ ՇԴ 3/0563/02/19) և քաղաքացի Մոսկով Մկրտիչի Սարգսյանի 2020 թվականի հունվարի 10-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2019 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռով (Քաղաքացիական գործ թիվ ՇԴ 3/0563/02/19) քաղաքացի Մոսկով Մկրտիչի Սարգսյանի սեփականությունը ճանաչված 199.555 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի սեփականությանը համարվող 08-048--0111 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.13149 հեկտար մակերեսով հողամասը (հասցեն՝ Լուսակերտ համայնք, 6-րդ փողոց, 6-րդ փակուղի, թիվ 1) ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված լրացուցիչ

նվազեցնող 0.6 գործակցի կիրառմամբ, մեկ քառակուսի մետրը՝ 86.4 Հայաստանի Հանրապետության դրամ, 0.13149 հեկտար հողամասի համար՝ **113610 (մեկ հարյուր տասներեք հազար վեց հարյուր տաս)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, վաճառել քաղաքացի Մոսկով Մկրտչի Սարգսյանին (անձնագիր՝ 002541431 տրված 16.11.2015 թ, 028-ի կողմից):

2. Նշել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Լուսակերտ համայնքի ղեկավար Սամվել Բալաբեկյանին՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Մոսկով Մկրտչի Սարգսյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Համապատասխան որոկավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

5. ՈՒԺը կորսրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 22 - ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի սեփականությանը հանդիսացող, 08-048--0111 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.13149 հեկտար հողամասը ուղղակի վաճառքով քաղաքացի Մոսկով Մկրտիչի Սարգսյանին վաճառելու մասին» թիվ 2-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ .....

ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ՝ .....

ՄԱՐՏԻՆ ՄԵՍՐՈԲՅԱՆ՝ .....

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ՝ .....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ**

«22» հունվարի 2020 թվական
գյուղ Լուսակերտ